ՌՈՒԶԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՈՐ ԺՊԻՏԸ

ԵՐԵՎԱՆ
ԼՈՒՍԱԿՆ
2025

«Մոր ժպիտը» գիրքը նվիրում եմ մորս՝ Ասյա Գրիգորյանի պայծառ հիշատակին

Ռ. Միրզոյանի (Վարդանյանի) ստեղծագործությունների 7-րդ հրատարակությունը՝ «Մոր ժպիտը» գիրքը, հետաքրքիր է տարբեր տարիքի ընթերցողների համար: Կարճ պատմվածքներն ու նրա ինքնատիպ չափածո ստեղծագործություններն ընթերցողին վարակում են իրենց բարությամբ, ազնվությամբ և հուզականությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԻՄ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ---------- ------ 5
ԻՍԿԱԿԱՆ ՏՂԱՄԱՐԴԸ ---------- 19
ՄՈՐ ԺՊԻՏԸ ---------- 33
ՏԻԿՆԻԿԸ ---------- 44

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՍԵՐ ---------- 56
ՆՈՐ ՕՐՆ Է ԳԱԼԻՍ ---------- 58
ԴԵՊԻ ՀԱՂԹԱՆԱԿ ---------- 59
ՍԻՐՈ ՀՈՒՇԵՐ---------- 61
ԽԱՌՆԱՇՓՈԹ ---------- 62
ՄՈՒՐԱՑԻԿԸ ---------- 64
ԿԱՐՈՏՆԵՐ ---------- 66
ԶԳՈՆ ԼԻՆԵՆՔ ---------- 68
ԺՊԻՏԸ ---------- 69

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԻՄ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Գարունն է ժպտում պատուհանի ապակիներից ներս: Արևի ոսկեշող ճաճանչներն իրենց փայլերով և ստվերների խաղով ասես փորձում են ինձ դուրս կանչել տանից, իսկ ես հիվանդ պառկած եմ անկողնում: Երբեք այսքան երկար չեմ հիվանդացել թոքաբորբով:

Դուռն են ծեծում:

Ամբողջովին խոնավ մարմնիս սրթսրթոցն անտեսելով՝ մի կերպ մոտենում եմ դռանը:

- Ո՞վ է, - հարցնում եմ:

- Ե՛ս եմ, - լսում եմ ի պատասխան:

Բացում եմ դուռը: Աստվա՛ծ իմ, իրո՛ք, ես եմ:

«Բայց ինչո՞ւ եմ ես այսպես փնթի հագուստներով ու գզգզված մազերով տանից դուրս եկել», - սա առաջին միտքն է, որն անցնում է գլխովս: Հաջորդ պահին զարմանքից քար կտրած՝ փորձում եմ հասկանալ, թե ինչպես եմ ես այս վայրկյանին կանգնած դռների միջև, եթե ես այստեղ եմ՝ տանը: «Չէ, փառք Աստծո, ես չեմ, - խորը շունչ

քաշելով եզրահանգում եմ, - ես այդպիսի փոս ընկած ու փոքր աչքեր չունեմ և ոչ էլ կմախքի պես նիհար եմ ու տգեղ»: Սկսում եմ ավելի ուշադիր զննել նրա դեմքը: «Ի՜նչ հարազատ դիմագծեր ունի, - մտածում եմ, - մի՞թե իմ կյանքը հնդկական ֆիլմի է վերածվել և ես երվորյակ քույր ունեմ»:

Նա ներս մտնելով՝ այնպես երջանկացած ու մտերմաբար է փաթաթվում ու այտս համբուրում ասես հազար տարի ինձ չտեսած ամենամոտ հարազատս լինի:

- Ես եկել եմ, որովհետև չէի կարող չգալ, - զվարթ ձայնով ճռվողում է, - դու ամեն օր ներում ես խնդրում Աստծուց, իսկ հիմա ես եմ ուզում քեզնից ներում խնդրել: Ես այս վերջերս շատ թույլ եմ ինձ զգում, բայց հիմա այնքան երջանիկ եմ, քանզի դեռ կարողանում եմ քայլել: Բոլոր ծանոթներիցս հերթով ներում եմ հայցել: Դու վերջինն ես իմ ցուցակում: Շատ էի վախենում, որ տանը չբռնացնեի քեզ:

- Ներեցե՛ք, ես Ձեզ չեմ ճանաչում, կամ գուցեև ճանաչում եմ, բայց կներե՛ք ինձ, որ մոռացել եմ, - ասում եմ: - Վերջերս ինձ մոտ կարծես հիշողության

կորստի նշաններ են նկատվում: Դուք իմ նկարներին շատ եք նման:

- Պա՛հ, պա՛հ, պա՛հ, էդ ինչո՞ւ ես հետս «Դուք»-ով խոսում, - հեգնախառն ինձ է դիմում՝ նայելով ուղիղ աչքերիս մեջ, - լա՛վ, քո գործն է, ավելի կարևոր խնդիրներ ունեմ: Ես քո առջև շատ մեղավոր եմ, - շարունակում է, - դու նույնիսկ չգիտես, թե ինչքան: Ուզում եմ ինձ վերջապես ներես:

- Բայց ո՞վ եք Դուք: Լա՛վ, ինձ թույլ կտամ «դու»-ով դիմել: Ո՞վ ես դու կամ ավելի ճիշտ՝ ո՞վ եմ ես: Հո Աստված չեմ, որ քո մեղքերը ներեմ:

- Հիշո՞ւմ ես, - շարունակում է նա, ասես ինձ չի էլ լսում, - քո դպրոցական սիրո հույզերով գրված այն երկտողը: Հիշո՞ւմ ես դողացող ձեռքով ցաքուցրիվ գրված տողերդ: Նույնիսկ հասցեատիրոջ անունը մոռացար գրել, այնպես էին այրվում սիրտդ ու վարդագույն այտերդ: Այդ երկտողը նրա պայուսակի մեջ նետելուցդ առաջ, դիտավորյալ փոխել էի նույնանման պայուսակների տեղերն իրար հետ: Դու Վահանի պայուսակի մեջ գցեցիր այդ թղթի կտորը: Խե՜ղճ Վահան... Դու դարձար նրա առաջին ու անպատասխան սերը:

- Ինչպե՞ս, Արամը երբեք էլ չի՞ կարդացել իմ երկտողը: Ո՞վ ես դու և ինչո՞ւ այդպես վարվեցիր, - բացականչում եմ մի քիչ բարկացած տոնով, - մի՞թե դու էլ էիր համակրում նրան:

- Չես սխալվում, համակրում էի, գուցեև քեզնից առավել, բայց ի տարբերություն քեզ, ես երբեք այդքան թեթևամիտ չէի վարվի և առաջինը չէի խոստովանի իմ զգացմունքը: Տանել չեմ կարողանում այդպես վարվող աղջիկներին:

- Դե լա՛վ, ոչինչ, - ասում եմ արդեն հանդարտված ու ընկերական տոնով, - հիմա այլևս մի՛ մեղադրիր քեզ այդ արարքի համար: Այնքան էլ տարված չէի Արամով, թեթև հրապուրանք էր, է՛լի:

Նա հայացքն ինձնից թաքցնելով կմկմում է.

- Կներե՛ս ինձ, ես փոխեցի քո ճակատագիրը:

- Ես գոհ եմ իմ ճակատագրից, - ասում եմ, - ունեմ լավ բնակարան, աշխատանք, երեխաներ, որոնք էլ շուտով իրենց երեխաները կունենան:

Նա հայացքն ինձնից փախցնելով՝ հարցնում է.

- Իսկ հիշո՞ւմ ես, որ որոշել էիր հաջողված նկարչական աշխատանքներիցդ մեկը ներկայացնել դպրոցական ցուցահանդեսին, բայց սեղանի վրա

դրված նռան հյութով լի բաժակը թափվելով՝ ողջ նկարածդ ապականեց: Կներես ինձ, իրականում պատահական թվացող շարժումով՝ ես դիտավորյալ թափեցի այն: Ախր, ես այն ժամանակ շատ հիմար էի, կարծում էի ավելի լավ կարող էիր նկարել: Նաև, չէի սիրում քո նման անհամեստ տաղանդներին: Ես փոխեցի քո ճակատագիրը: Դու այլևս չնկարեցիր:

Հիշողությանս մեջ աղոտ ուրվագծվում է դպրոցական տարիների իմ ամենասիրելի ընկերուհու՝ Մարինեի դեմքը, որին դպրոցն ավարտելուց հետո արդեն երեսուն տարուց ավելի է, ինչ չեմ տեսել: Մեր ընկերության տարիներին այնքան էինք նմանվել իրար, որ նույնիսկ որևէ նոր ուսուցիչ դասարան մտնելիս անմիջապես հարց էր տալիս. «Դուք երկվորյակնե՞ր եք»:

- Հասկացա՛, - ուրախ բացականչում եմ, - դու Մարինե՛ն ես:

- Թեկուզև Մարինեն լինեմ, էականը դա չի, միայն թե ների՛ր ինձ, խնդրում եմ, ներիր: Հիշո՞ւմ ես, սպորտային մրցումներին նույնպես իմ պատճառով վայր ընկար, հիշո՞ւմ ես:

- Բա՛ն ասացիր, այնքա՛ն եմ ցած ընկել, ո՞ր մեկը հիշեմ:

- Գիտե՞ս, ես ինքս ինձ չեմ կարողանում ներել, - շարունակում է նա ափսոսանքով, - ախր, ինչո՞ւ էի բարկացած պատռում քո գրած փոքրիկ բանաստեղծությունները, երբ վերջացնելուց հետո բարձրաձայն կարդում էիր ինձ համար: Չկարծես, թե նախանձում էի, ուղղակի չէի սիրում, երբ ամոթդ կորցրածի պես հոգուդ մերկությունն էիր փորձում ցուցադրել մարդկանց:

- Դու ինձ արդեն վախեցնում ես, - ինչ-որ գերբնական ուժի ներկայություն զգացածի պես արագ վրա եմ տալիս, - իմ հետ կապված այս բոլոր մանրամասնությունները որտեղի՞ց գիտես: Դու այն ժամանակ որտե՞ղ էիր, ինչո՞ւ քեզ չեմ հիշում: Մի՞թե հիշողությանս կորուստն այս չափերի է արդեն հասել:

Նա չպատասխանելով իմ հարցադրումներին շարունակում է.

- Իսկ հիշո՞ւմ ես, որ քո փոխարեն ես էի պատասխանում բոլոր այն երիտասարդների հեռախոսազանգերին, ովքեր համակրում էին քեզ:

Ինչպե՞ս էիր լաց լինում, երբ ամենացանկալի ու երազածդ մարդկանց էի կոպտում կամ վիրավորում ասելով՝ այլևս չզանգեք ինձ:

- Նման բաներ չեն եղել, - բարկանում եմ ես, - էդ էր պակաս, որ ինչ-որ երիտասարդների համար ես արտասվեի: Ավելի ճիշտ, սպասի՛ր, սպասի՛ր, կարծես մի դեպք աղոտ հիշողության պես հայտնվեց գլխումս: Չնայած, հիմա իմ սեփական ուղեղին էլ չեմ վստահում: Այնպես համոզիչ կերպով կարող է նույն պահին հորինել, որ ես էլ եմ երբեմն հավատում դրան:

- Կներե՞ս, - ասում է նա ցածրաձայն, - ճակատագիրդ էի փոխում:

- Դե հերիք է, Է՛լի՝ ճակատագի՛ր, հա ճակատագիր:

- Թույլ տուր շարունակել, խնդրում եմ, - պատասխանում է նա, - միտքս մի՛ ընդհատիր հիմա:

Կարճ լռությունից հետո, ասես իրոք ցրված մտքերը հավաքելով, նա զգուշորեն հարցնում է.

- Օգտվելով քո անասելի բարությունից՝ հիշո՞ւմ ես, որ խնդրում էի քեզ օգնել գործընկերուհուդ: Նա իր արդեն վաղուց քնած նորածին երեխային ամբողջ օրը ձեռքերի վրա անիմաստ պահելով՝

ոչ մի գործ չէր անում տանը, և դա դառնում էր ամուսինների ամենօրյա վեճի թեման: Նրա փոխարեն դու բոլոր տնային գործերն անելուց հետո՝ շնչասպառ վազում էիր սեփական գործերիդ հետևից:

- Մի՛ հիշեցրու ինձ նրա մասին, խնդրո՛ւմ եմ, - ասում եմ վիրավորված, - արդեն երկու շաբաթ է, ինչ տանը մենակ եմ ու ծանր հիվանդ: Շատ անգամներ եմ կյանքում հիվանդացել, բայց հիմա շատ հուսահատված եմ: Այնպիսի ուժգին ցավ ունեմ կրծքավանդակումս, որ նույնիսկ ինձ թվում է, թե այս անգամ արդեն չեմ փրկվի: Երեկ բավականին աղաչանք ու պաղատանք արեցի այդ նույն ընկերուհուս, որ գոնե մի քանի օրով ինձ խնամեր, կարողանայի շուտ ապաքինվել: Չե՛ս հավատա: Նա առանց որևէ էական պատճառաբանության մերժեց ինձ, իսկ ես նրան մշտապես քրոջ պես էի ընդունում…

Իմ անկոչ հյուրը դողդոջուն քայլերով մոտենում է ու առանց թույլտվություն հայցելու նստում աթոռին: Տեսնելով սեղանի վրա դրված ապակե բաժակով

ջուրը՝ թափով վերցնում է և կլկլացնելով դատարկում ողջ պարունակությունը:

- Չսրճե՞նք, - այնպիսի տոնով է առաջարկում, ասես ինքն է տանտիրուհին: Ախր, ինչպե՞ս չի հասկանում, չէ՞ որ նոր ասացի, որ խնամքի կարիք ունեմ: Ոչ թե ես, այլ ինձ համար թեյ կամ սուրճ պիտի պատրաստեն: Մի՞թե չի նկատում, որ հազիվ եմ ոտքի վրա կանգնում:

- Ես կպատրաստեմ, մի՛ անհանգստացիր, - իմ դժկամ դեմքին նայելով վրա է տալիս ու անցնում գործի:

Մի քանի սխալ դարակներ բացել-փակելուց հետո արագ գտնում է սուրճն ու շաքարավազը:

Ես մի կարճ ժամանակով մոռանում եմ նույնիսկ, որ հիվանդ եմ: Ի՜նչ հետաքրքիր է նրա հետ, ի՜նչ հաճելի:

Նա՝ իմ այդ զարմանալի հյուրը, տարբեր զվարճալի դեպքեր է պատմում սուրճի սեղանի շուրջ: Գավաթների մեջ մնացած սուրճի մրուրի մեջ զանազան պատկերներ գտնելիս ու գուշակություններ անելիս էլ այնքա՜ն ենք

հռհռում մեր ճակատագրերի նմանության վրա, որ ծիծաղից երկուսս էլ արցունքակալվում ենք:

- Կներե՛ս ինձ, շատ եմ խնդրում, ուզում եմ չմոռանալ իմ այստեղ գալու հիմնական նպատակը, - անսպասելի լրջացած շարունակում է նա:

Ես գլխով հավանության նշան անելով ցույց եմ տալիս մինչև վերջ նրան լսելու իմ պատրաստակամությունը:

- Ամուսինդ՝ Կարենը, նույնպես իմ մեղքով տանից հեռացավ: Ես գտնելով իմ վաղեմի ընկերուհու գեղեցիկ նկարը ֆեյսբուքյան էջերից մեկում՝ չդիմացա ու ցույց տվեցի նրան: Շատ եմ ցավում: Ախր, ինչո՞ւ արեցի: Ազնիվ խոսք, մտքիս ծայրով անգամ չէր անցնում, որ նա լքելով քեզ ու այսքան տարիների աստվածային ձեր միությունը՝ կգնա սիրո այդ նոր հրապուրանքի հետքերով:

Ա՛յ քեզ բան: Սենյակն ասես միանգամից մթագնում է աչքերիս առջև: Ես զայրույթից վեր եմ ցատկում տեղիցս:

Այս ի՞նչ է կատարվում ինձ հետ: Զգում եմ, ոնց է արյունս ամբողջ ուժով շռնդալից ապտակներ

հասցնում դեմքիս: «Ահա նա, - մտածում եմ, - ահա, թե ով է իմ ողջ դժբախտությունների պատճառը»: Ես չեմ հասկանում, թե ինչ դև է արթնանում իմ մեջ, ուզում եմ այդ ստոր էակին բզիկ-բզիկ անել ու գցելով ոտքերիս տակ սատկացնել: Ո՞նց եմ ատում նրան: «Դրա՞ն տեսեք, - բարկանում եմ մտքումս, - կանգնել իմ դիմաց ու իրեն հրեշտակ ձևացնելով մեղքերի թողություն է հայցում»:

Անսպասելի բռնելով նրա գանգրահեր ու երկար մազերից՝ այնպես ուժգին եմ քաշում նրան աթոռի վրայից և ինչքան ուժ ունեմ իմ հիվանդ թևերում այնպես եմ թափահարում գլուխը, որ նույնիսկ չեմ լսում ամեն անգամ պատին զարկվելիս նրա ճիչը.

- Թո՛ղ ինձ, խնդրո՛ւմ եմ, հերիք է, էլ չեմ դիմանում, խնդրում եմ:

Բնության օրենք է՝ զոհի վախեցած ու խղճալի աղաչանքներն ավելի են կատաղեցնում արդեն գազազած, վայրագ էակին, ինչպիսին հիմա ես եմ:

Երբ արդեն հոգնած ու թուլացած ընկնում եմ հատակին, նա գլուխը բռնած՝ ցավից և վիրավորանքից լաց է լինում: Այնպես վարակիչ է հեկեկում, որ ես նրանից ավելի բարձրաձայն եմ

սկսում ողբալ: Խորը շունչ քաշելով փորձում եմ հանգստացնել ինքս ինձ:

Մի պահ հայացքս ընկնում է հայելու մեջ իմ արտացոլանքին: Ա՛յ քեզ բան, այնքան փոս ընկած ու փոքր աչքեր ունեմ և ի՜նչ գզգզված են մազերս: Մի՞թե սա ես եմ: Այս հիվանդության պատճառով էլ կմախքի պես նիհարել եմ ու այնպե՛ս տգեղացել: Այն խեղճն էլ իմ կողքին դեռ անօգնական ընկած է հատակին:

Ես արդեն չեմ հիշում, թե ինչու գժտվեցինք: Հիմա միայն մի ցանկություն ունեմ՝ օգնել նրան ոտքի կանգնել: Մեծ դժվարությամբ բարձրացնում եմ նրա ծանր մարմինը: Այնքան թույլ եմ, թվում է, թե նրա ծանրությունից ուր որ է շունչս կփչեմ: «Աստվա՛ծ իմ, - անընդհատ կրկնում եմ ինքս ինձ, - միայն թե ձեռքիցս սայթաքելով նորից վայր չընկնի, այլապես, վստահ եմ՝ կմահանա, մի՞թե ես մարդասպան եմ»:

Պատին հենելով մի կերպ կանգնեցնում եմ նրան, բայց երբ ձեռքերս հեռացնում եմ, նա նորից թուլացած, պատից բռնվելով դանդաղորեն ներքև է սահում, իսկ ես այլևս ուժ չունեմ նրան պահելու: Նրա աչքերի կիսաբաց ճեղքերից տեսնում եմ

ոչնչության սարսափին համակերպված մութ ու անբացատրելիորեն բթացած բիբերը:

Ես շշնջում եմ հուսահատ.

- Մի՛ լքիր այս աշխարհը, խնդրում եմ, մի՛ լքիր: Թե կարող ես, հիմա էլ, խնդրում եմ, հիմա է՛լ փոխիր իմ ճակատագիրը, չէ՞ որ ինձ բանտ կտանեն որպես ողորմելի մի մարդասպանի:

Նա մի կերպ բացելով աչքերը շշնջում է.

- Մենք մեռնում ենք, սիրելի՛ս, մայրդ երկնքում քեզ է սպասում:

- Մե՞նք, - զարմացած բացականչում եմ ես, - մա՞յրս, դու ո՞վ ես:

- Քո Եսն եմ, իմ ազնիվ, իմ հարազատ էակ: Ափսո՛ս, դու ինձ այդպես էլ չսիրեցիր ու չգնահատեցիր, ինչպես հարկն է: Ես ներում եմ քեզ այդ ամենը, քանզի հուսով եմ, որ Աստված էլ մեզ կների: Փակի՛ր աչքերդ ու քնիր հավերժական խաղաղությամբ: Մնա՛ս բարով, սիրելի՛ս, մնաս բարո՛վ:

Քիչ անց ականջներիս մեջ կրկին հնչում է նրա թույլ ձայնը. «Ամրապնդվի՛ր, հարազա՛տս, մայրիկն արդեն այստեղ է»:

«Ի՞նչ է խոսում, - տարակուսում եմ ես, - մայրս վաղուց է մահացել, ինչպե՞ս կարող է այստեղ լինել»:

Աստվա՛ծ իմ, ես իրոք լսում եմ մորս ձայնը, այնքան հարազատ ու քնքույշ է, ասես օրորոցիս կողքին լինի: Ահա, ահա մորս աչքերը: Միայն մայրս կարող է այդպես հոգատար ու կարեկից նայել ինձ ու ցավի միջով այդպես ժպտալ: Միայն իմ մոր ժպիտն է, որ կարող է ինձ ամոքել ու հանգստացնել իմ բոլոր վախերը: Գուցե մայրս եկել է ինձ՝ իր հիսնամյա փոքրիկին փրկելո՞ւ մարմնական այս դժոխային ցավերից և հոգուս հետ միախառնվելով՝ ինձ իր հետ անհետացնելո՞ւ երկնային հավերժության մեջ:

Սա վե՛րջն է, իմ վերջն այս աշխարհում ու հզոր անհայտի սկիզբը տիեզերքում: Հավաքելով ուժերս մի վերջին կարոտագին հայացքով փորձում եմ նայել այս չքնաղ աշխարհին:

Գարունն է ժպտում պատուհանի ապակիներից ներս: Արևի ոսկեշող ճաճանչներն իրենց փայլերով և ստվերների խաղով փորձում են ինձ դուրս կանչել տանից, բայց ավա՛ղ, մի ակնթարթ հետո ես այլևս գոյություն չեմ ունենա: Թթվածինը դադարել է ներխուժել շնչուղիներովս, մնում է միայն

արտաշնչել արդեն գոյացած ածխաթթու գազի մոլեկուլներն ու...

Հավերժական լռության մեջ դեռ լսում եմ իմ վերջին շշունջը, որն ինձնից հետո էլ երկար ժամանակ կշարունակի թևածել օդում. «Ախր, ինչո՞ւ այս անգամ էլ նա չի փոխում իմ ճակատագիրը, գոնե մի վերջին անգամ, ինչո՞ւ»:

ԻՍԿԱԿԱՆ ՏՂԱՄԱՐԴԸ

Մութն արագորեն երկնքից ցած սահելով՝ հանդիպում էր փողոցի լապտերների պայծառ լուսավորությանն ու անմիջապես ոչնչանում: Արդեն ցրտում էր: Քամին չարաճճի սուլելով ու մի ակնթարթ բարձրացնելով մարդկանց զգեստներն ու վերնաշապիկները՝ փորձում էր ազատ արձակել կաշկանդված մերկություններն իրենց շորեղեն կապանքներից: Շփոթված մարդիկ էլ արագ իջեցնում էին ու ձեռքերով ամուր սեղմած պահում իրենց փեշերն ու վերնաշապիկները: Ոչ-ոք չէր

հասկանում քամու լեզուն: Դա նրանց համար պարզապես ոռնոց էր ու սուլոց: Մինչդեռ խելագար քամին քաշքշելով մարդկանց հագուստները, ասես ծիծաղը զսպելով՝ մերթ շշնջում էր, մերթ էլ գոռում նրանց ականջներին.

- Ի՜նչ եք ամաչում ձեր մարմնի մերկությունից, ձեր մերկ հոգիների չարությունից ամաչեք: Ու՜ու ու...

Ավտոբուսը սրընթաց անցավ կանգառում սպասողների հուսահատ հայացքների առջևով:

- Ինչո՞ւ չկանգնեց, - քթի տակ մրթմրթաց մի ակնոցավոր տարեց կին:

- Մայրի՜կ ջան, մի՜ անհանգստացիր, - փոքրիկ բազմության միջից լսվեց ի պատասխան, - նոր զանգեցի կենտրոն, ասացին վերջին ավտոբուսը դեռ չի անցել, մոտ կես ժամից այստեղ կլինի:

Երբ այդ երանելի ավտոբուսը ժամանեց, իր երեխայի ձեռքը բռնած մի կին մարդկանց հրելով և բոլորի վրա բղավելով առաջ անցավ.

- Ճանապարհ տվե՜ք, այստեղ երեխա կա:

Քիչ անց լսվեց վարորդի խռպոտ ձայնը:

- Ոչ ոք կանգնած չմնա, եթե ազատ նստատեղ այլևս չկա, մի՜ բարձրացեք:

Բարեբախտաբար, բոլորը տեղավորվեցին: Նույնիսկ առաջինը բարձրացած միակ փոքրիկ ուղևորը՝ չորս տարեկան երեխան, վերջին շարքում իր առանձին նստատեղը գրավեց երկու ծնողների միջև:

- Ի՜նչ հաճելի տաք է ներսում, - տեղավորվելուց հետո իրենց գոհունակությունը չէին թաքցնում դեռևս ցրտից սրթսրթացող մարդիկ:

Երբ ավտոբուսը շարժվեց, հանդարտ լռության մեջ լսվեց փոքրիկի կամակոր լացը.

- Էն խաղալիքն եմ ուզո՛ւմ, ետ գնանք խանութ, փոքրիկ մեքենան առնե՛նք:

Երիտասարդ հայրը հուսահատությունից, տարբեր խոստումներ էր տալիս տղային ու շուրջը նայելով փորձում էր նրան զբաղեցնելու ինչ-որ բան գտնել: Աչքն ընկավ իր իսկ դաստակի վրա դաջված կարմիր սրտիկին և բառերին. «Սիրտս անվերջ պիտ գոռա, Սիրում եմ քեզ, իմ Լոռա»:

Մի պահ իրականությունից կտրվեց, և հիշողության մեջ բոցկլտաց այդ դաջվածքն ունենալու առաջին օրը…

Հպարտորեն ցույց էր տվել ընկերներին, որ գնահատեն իսկական տղամարդու սերն ու նվիրվածությունն իր սիրած աղջկա՝ Լոռայի հանդեպ: Ծիծաղել էին ասելով. «Արտա՛կ ջան, կարող էիր էդ բանաստեղծական տողի փոխարեն մի պատմվածք դաջեիր թևիդ վրա»:

«Կծիծաղեք, իհարկե, կծիծաղեք, որ խանդից ու նախանձից լաց չլինեք: Չէ՞ որ Լոռան ինձ է ընտրել ու մենք արդեն հանդիպում ենք», - հպարտորեն ասել էր նա:

Արտակը գորովանքով նայեց ավտոբուսի մեջ հանդարտ նստած կնոջը՝ Լոռային, և Աստծո կամքով լույս աշխարհ եկած իրենց չորս տարեկան հրաշագեղ փոքրիկին: Չնայած, առօրյա թեթև վեճեր էլ էին ունենում կնոջ հետ, բայց միևնույնն է՝ Լոռան իր աշխարհն էր՝ ներսի ու դրսի աշխարհը: Նա զգաց, որ պատրաստ էր անգամ գիշատչի պես հոշոտել բոլոր նրանց, ովքեր գեթ մի անգամ կհանդգնեին չար աչքերով նայել Լոռային կամ իր փոքրիկին:

Լացող պստիկը շարունակում էր քաշքշել հոր վերնաշապիկի թևքը՝ սղոցելով ուղևորների ականջները.

- Պա՛պ, էն ավտո՛ն, ես էն ավտոն եմ ուզում:

- Անո՛ւշս, նայի՛ր ձեռքիս: Ի՞նչ է նկարված, - դաստակի դաջվածքը ցույց տալով հայրը փորձեց նրա ուշադրությունը շեղել չգնված խաղալիքից:

- Կարմիր սրտի՛կ: Դո՞ւ ես նկարել, - հարցրեց պստիկը:

- Իհա՛րկե: Ես քո մամայի համար եմ նկարել, որ ամուսնանա ինձ հետ: Գիտե՞ս, ինչքա՛ն եմ սիրում քո մամային, - ու աչքի պոչով նայելով կնոջ գոհունակ դեմքին՝ ժպտաց:

- Պա՛պ, ես էլ եմ ուզում իմ ձեռքին այդպիսի սրտիկ ունենալ:

- Իհա՛րկե, իսկական տղամարդը պետք է դաջվածք ունենա իր մարմնի վրա: Դեռ փոքր ես, կմեծանաս, ինչ կուզես՝ կնկարես:

- Ի՞նչ հիմարություններ եք սովորեցնում երեխային, - բարկացավ նրանց դիմաց նստած մի ճերմակահեր կին, - փոխանակ մի լավ բանաստեղծություն կամ մեր պատմությունը

սովորեցնեք: Քանի դեռ շատ փոքր է՝ սկսեք մեր հերոսների կամ թագավորների անուններից: Թե չէ, ի՞նչ դատարկ բաներով եք ոգևորում փոքրիկին:

Արտակը շփոթվեց: Անվստահ հայացքն ուղղեց զայրույթից կարմրած Լոռայի դեմքին: Վերջինս շուրթերը մոտեցնելով ինչ-որ բան փսփսաց ամուսնու ականջին:

Արտակը շուռ գալով ծեր կնոջ կողմը՝ բղավեց.

- Քո ի՞նչ գործն է, ա՛յ պառավ, քո մի ոտը երկրի վրա է, մյուսը՝ երկնքում, դու ի՞նչ ես հասկանում մեր նոր ժամանակներից:

- Այդ ինչպե՞ս ես խոսում տարեց կնոջ հետ, - տարբեր կողմերից լսվեցին մի քանի վրդովված ձայներ:

Երկար ժամանակ լռություն տիրեց: Ավտոբուսն առանց կանգնելու սլանում էր առաջ: Կանգառներում արդեն ոչ-ոք չկար: Վերջին ուշացած ավտոբուսին սպասող մարդիկ հուսահատ ետ էին գնացել, որտեղից որ եկել էին:

Տաղտկալի և գորշ լռությունը խախտվեց փոքրիկ ուղևորի մանկական ձայնից:

- Պա՛պ, որ մեծանամ, ես էլ քո նման մամայիս հետ կամուսնանամ ու ձեռքիս էլ սրտիկ կնկարեմ: Իմ մաման աշխարհի ամենասիրուն մաման ա, ես միայն մամայիս հետ եմ ամուսնանալու:

Ուղևորների փռթկոցներն ու համատարած հռհռոցներն արթնացրեցին առաջին նստարանին ննջող մի տարեց տղամարդու, որը մի քանի բառ փնթփնթաց ու նորից քնեց:

- Ինչո՞ւ են ծիծաղում, - նեղացկոտ հայացքով շուրջը նայեց երեխան:

Լոռան գորովանքով փաթաթվեց իր պստիկին ու համբուրեց ճակատը:

- Քո վրա չեն ծիծաղում, արևս, պարզապես ուրախանում են:

Ավտոբուսը կանգառում կանգնեց ու մի ալևոր ծերունի՝ կարծես հեքիաթների միջից դուրս եկած մի իմաստուն, դանդաղ բարձրացավ ավտոբուս: Նրա ճերմակ մորուքն անխնա թափվել էր կրծքավանդակին, իսկ արևից խունացած ծղոտե գլխարկը համարյա ծածկում էր աչքերն ու սառած ականջները: Նա մի պահ աստիճանների վրա կանգ

առավ և ազատ նստատեղ փնտրող հայացքով նայեց շուրջը:

- Ախր, էս ի՞նչ եք դառել, ժողովո՛ւրդ, - լսվեց վարորդի դժգոհ ձայնը, - չէ՞ որ կանգնած մարդ իրավունք չունեմ տեղափոխելու: Ա՛յ երիտասարդ, - բարկացած դիմեց նա փոքրիկի հորը՝ միաժամանակ վարելով ավտոբուսը, - չե՞ս տեսնում, նստելու դատարկ տեղեր չկան, տղայիդ դի՛ր գիրկդ, թող այս պապիկն էլ նստի:

Արտակը կրկին շփոթված նայեց կնոջ դեմքին, որն արդեն վաղուց իր տեսակետն արտահայտել էր խոժոռ ու սպառնալից հայացքով: Ամուսինն անմիջապես նրա հայացքում որսաց իր պատասխանը.

- Իսկ քեզ ո՞վ ասաց, որ իմ երեխան չպիտի մի առանձին նստատեղ զբաղեցնի, - վրա տվեց խիստ ձայնով, - իմ երեխան պիտի ազատ նստի:

- Պա՛պ, ինչի՞ է գոռում քո վրա էն մարդը:

- Արտա՛կ, տե՛ս, նույնիսկ երեխան է գիտակցում, որ այնքան թույլ ես՝ ով ուզի, կգոռա վրադ, - ամուսնու վրա զայրացավ Լոռան:

Արտակը որոշեց ավելի բարձր ձայնով բղավել վարորդի վրա.

- Տեղ չունեիր, չկանգնեիր, իմ երեխան պիտի նստի, որտեղ որ ուզենա, ե՛ս կվճարեմ:

- Ինձ քո կեղտոտ փողը պե՛տք չի, - վիրավորված ասաց վարորդն ու կանգնեցրեց ավտոբուսը՝ ծերունուն իջեցնելու:

Լուռ ու գլխահակ կանգնած ծերունին, կարծես ուղևոր դատավորներից իր չգործած հանցանքի համար կայացվելիք մահվան դատավճռին էր սպասում: Մտքում Աստծուց օգնություն հայցելով՝ մերթ վարորդին էր նայում, մերթ անտարբեր դեմքերով մարդկանց, որոնք այդպես էլ չսաստեցին հանդուգն երիտասարդին, քանի որ լավ գիտեին նրա պատասխանը. «Էդքան անհանգստանում ես՝ դու իջի՛ր ավտոբուսից, քո տեղը զիջի՛ր»: Չէ՞ որ այդ վերջին ավտոբուսն արդեն բավական առաջ էր շարժվել, և ստիպված էին կամ ետ քայլել ցուրտ ու մութ փողոցներով, կամ տաքսի պատվիրել, որի գումարը երևի շատերը չունեին:

Ծերունին սկսեց դանդաղ ու դողդոջուն քայլերով իջնել աստիճաններից: Նրա վերնաշապիկի թևքի

տակից մի պահ երևացին ու ծածկվեցին ինչ-որ դաջված բառեր: Արտակի աչքից չվրիպեց դա:

«Այս մարդը կարծես իմ ծերությունը լինի, ինչքան նման է ինձ», - մտածեց նա, իսկ երբ զգաց ծերունու վերջին աղերսագին հայացքն իր վրա, սկսեց ավելի ուշադիր զննել նրա դիմագծերը: Գլխարկի տակ թաքնված աչքերը համարյա չէին երևում, բերանն ու այտերն ամբողջապես ծածկված էին սպիտակահեր մորուքով: «Աստվա՛ծ իմ, նա երևի իմ հայրն է, - հուզմունքով մտածեց Արտակը, - դեմքը լավ չի երևում, բայց ահա նույն տեղում դաջվածքը, հասակը, տարիքը, ամեն ինչ համընկնում է»:

- Հայրի՛կ, - գոռաց ու վեր ցատկեց ծերունու ետևից վազելու, երբ կնոջ սաստող հայացքը նորից ետ շպրտեց նրան չոր նստարանի վրա:

- Հայրդ վաղուց է, ինչ գոյություն չունի, - հիշեցրեց Լոռան, - արդեն երեք տարի է, ինչ փնտրում և չեն գտնում նրան: Ծերունական մոռացկոտության պատճառով դուրս գալով տանից՝ կորել է: Մի՞թե դու էլ, Արտա՛կ, արդեն հիշողության կորուստ ունես և մոռացել ես այս մասին: Եթե մինչև հիմա ոչ մի լուր

չունենք, ուրեմն՝ ողջ չէ: Էդպես էլ խելքը գլխին տղամարդ չդարձար:

Դռները փակվեցին: Ավտոբուսը դանդաղորեն առաջ շարժվեց՝ դռների ետևում թողնելով աստիճանների վրայից արդեն անհայտացած ծերունուն:

Ամուսինը պատուհանից խեղճացած հայացքով ետ նայեց: Անցնող մեքենաները մի քանի ակնթարթ փակեցին ու նորից բացեցին տեսադաշտը:

Փողոցն ավտոբուսի արագությամբ ետ գլորվող կծիկի թելի պես ոլորապտույտ երկարելով՝ սպառնում էր թաքցնել ծերունուն ծառերի ու տների ետևում, իսկ տեսադաշտում նրա երևալու ժամանակն ակնթարթների հաստատուն քայլերով կարճանում էր ու կարճանում:

Երբ քամին, թռցնելով ծերի ծղոտե գլխարկը, հրճվանքով սկսեց խառնել կիսաճաղատ գլխի մի փունջ երկար ու ճերմակ մազերը, Արտակն արդեն կասկած չուներ՝ նա իր հայրն էր:

- Վարո՛ղդ, կանգնի՛ր, հայրս է, կանգնի՛ր, - գոռաց նա բարձրաձայն:

Հրելով իր թևից կառչած կնոջ ձեռքը՝ ավտուբուսի բաց դռնից խելագարի պես իրեն դուրս նետեց փողոց:

- Հայրի՛կ, հայրիկ ջան, սպասի՛ր:

Հևիհև վազելով պատկերացրեց, թե ինչպես կուրախանա իր մայրը, երբ հոր հետ միասին տուն մտնեն: Ակոսներով պատված մոր տանջահար դեմքը նորից կփայլի լուսավոր ժպիտի ամենապայծառ երանգներով: Նորից տունը կլցվի մոր աշխույժ ծիծաղով ու ջերմությամբ:

Արտակը հասավ ու ետևից գրկեց հոր ուսերը: Ծերունին վախեցած շրջեց գլուխը՝ չհասկանալով, թե ինչ է կատարվում, քանի որ փորձում էր տեսադաշտից չկորցնել օդի մեջ պարող գլխարկը: Նա հույս ուներ այն փրկել քամու ճիրաններից: Երբ ալեհեր գլուխը շրջելով ետ նայեց, նրա ծերացած ու փոքրիկ աչքերի վշտոտ հայացքը մխրճվեց տղայի սիրտը: «Ափսո՜ս», - չկարողանալով իր հուզմունքը զսպել՝ բացականչեց Արտակը: Ցավալի սխալմունք էր՝ ծերունին ոչ թե իր, այլ՝ մեկ ուրիշի հայրն էր:

Տղան մի ակնթարթ պապանձվեց, հետո հասկացավ, որ բոլոր հայրերն էլ երբ ծերանում են,

շատ նման են իրար: Նրանք կարեկից ու ջերմ հոգու կարիք ունեն և երեխայի պես սիրում են բոլորին, քանզի ամեն վայրկյան կարող են նրանցից և ոչ մեկին չտեսնել այլևս...

Արտակը ծերունուն խնդրեց իր հետ ավտոբուս բարձրանալ ու համարյա գրկելով նրա նիհար ու դողդոջուն մարմինը՝ աստիճաններով վեր տարավ: Երեխային նստատեղից բարձրացնելով մեղավոր ձայնով կմկմաց.

- Հայրի՛կ ջան, կներե՛ք ինձ, նստե՛ք խնդրում եմ:

Կինը չարությամբ ամուսնու գրկից խլելով երեխային՝ բղավեց.

- Այսուհետ տղայիդ կտեսնես միայն դատավորի կողմից որոշված օրերին: Ես բաժանվում եմ քեզանից: Դու այդպես էլ իսկական տղամարդ չդարձար, ոչ էլ կարգին հայր՝ որդուդ համար:

Արտակի կյանքում, բազմիցս լսած այդ խոսքերն առաջին անգամ կորցրեցին իրենց կարևորությունը: Նրան այլևս ոչինչ չէր անհանգստացնում:

Նա երջանիկ էր, կարծես գտել էր իր հորը, թեկուզև ուրիշի հորը և վստահ էր, որ իր որդին էլ մի օր անպայման կգտնի իրեն:

Ավտոբուսն առաջ էր սլանում: Երիտասարդը գորովանքով նայում էր ծերունուն ու փորձելով փարատել հոր նկատմամբ տածած անսահման կարոտը՝ հեռավոր նմանություններ էր փնտրում հոր և նրա դիմագծերի միջև:

Ծերունին ավտոբուսի պատուհանից դուրս էր նայում: Նրա ծղոտե գլխարկը դեռ ծածանվում էր օդում, կարծես կորցրած տիրոջն էր փնտրում: Իսկ քամին շարունակում էր չարաճճի սուլելով ու մի ակնթարթ հանկարծակի ուժեղանալով՝ թափով բարձրացնել հատուկենտ անցորդների զգեստներն ու վերնաշապիկները, ասես ջանք չէր խնայում մարդկային կաշկանդվածություններն իրենց կապանքներից ազատելու և բարության ավազահատիկներ շաղ տալու ամենուր:

ՄՈՐ ԺՊԻՏԸ

Արթնացել եմ ու անմիջապես տանից դուրս եկել: Լույսը դեռ նոր է բացվել, իսկ արևի ճառագայթներն այնքան ջերմ են շողում, ինչպես մայրիկիս քիչ առաջվա ժպտացող աչքերը: «Ես երջանիկ եմ: Ի՜նչ լավ օր է այսօր, - կրկնում եմ ինքս ինձ անդադար, - երբ աչքերդ բացում ես ու մայրդ ժպտում է քեզ, դրանից լավ բան չկա աշխարհում»:

Չնայած, վերջերս եմ աշխատանքի ընդունվել մեր տան կողքի շտապօգնության հիվանդանոցում, բայց փոքր եղբորս ծննդյան օրվա կապակցությամբ այսօր ազատ օր եմ խնդրել: Մայրս էլ վաղ առավոտյան տոնական տորթն է սկսել թխել, ի՜նչ լավ երեկո է սպասվում:

Հրաշալի գարնանային օր է: Հաճույքով քայլում եմ կանաչազարդ փողոցներով, թեև շատ գործեր ունեմ դեռ անելու: Արդեն մի քանի ժամ է, ինչ ութնամյա եղբորս համար ոչ մի հարմար նվեր չեմ կարողանում գտնել մոտակա խանութներից:

Անցնելով հիվանդանոցի կողքով, ինչ-որ տարօրինակ զգացում սեղմում է սիրտս: Հոգիս

կարծես տակնուվրա է լինում պատերից ներս գտնվող ինչ-որ մեկի անբացատրելի սիրուց ու կարոտից: Դեռ չեմ հասկանում, թե ում: «Բայց չէ՞ որ ընդամենը մի քանի օր է, ինչ սկսել եմ աշխատանքս, - մտածում եմ, - այս ինչպե՞ս եմ հասցրել այսքան մտերմանալ նոր գործընկերներիս հետ: Այսպիսի զգացմունք երբեք չեմ ունեցել»: Կանգնել եմ դռների մոտ ու չեմ կարողանում հեռանալ: «Չեմ մտնի, - որոշում եմ ես, - այսօր իմ աշխատանքային օրը չի»: Սակայն, ձեռքս առաջ եմ պարզում և բացում դուռը:

Ներս մտնելուն պես զարմանքից քարանում եմ: Սպասասրահում մերոնք են հավաքված՝ եղբայրս, քույրս, մորաքույրներս:

- Դուք ինչո՞ւ եք այստեղ, - տարակուսանքով հարցնում եմ, - բա՞ն է պատահել:

- Ուշացել ես, - ողբաձայն ասում է քույրս ու փաթաթվելով ինձ սկսում է հեկեկալ, - մամա՜ն, մաման արդեն մահացավ:

- Իհի՞նչ, ինչպե՞ս թե մաման..., - կմկմում եմ անսպասելիությունից խզված ձայնով, - ի՞նչ ես

ասում: Մի քանի ժամ առաջ տանն էի ու մաման խոհանոցում տորթ էր թխում:

- Հենց այդ տորթը թխելիս կարագն էր, որ չհերիքեց, - լացակումած վրա է տալիս մորաքույրս: - Պատրաստվում էինք սուրճ խմել, ասաց. «Մինչև սուրճը եփես՝ խանութից կվերադառնամ, կխմենք, հետո գործս կշարունակեմ»: Ալրոտ ձեռքերը գոգնոցով մի թեթև մաքրելով՝ այնպես արագ դուրս վազեց, և ահա՝ այս վրաերթը: Ախ, այդ սրիկա հարբած վարորդը… Իմ խե՛ղճ, իմ բարի քույրիկ…

Նա չկարողանալով պահել փղձկոցը՝ ձեռքերն արագ մոտեցնում է բերանին փորձելով կասեցնել այն:

Ավագ Եղբայրս ցածրաձայն ավելացնում է.

- Մեզ դուրս հրավիրեցին չորրորդ հարկի վերակենդանացման բաժնից, իսկ մարմինը դեռ դուրս չեն բերել, ազատ մեքենա չունեն տեղափոխելու համար:

«Մայրս Է՛լ չկա», - ճչում է հոգիս, իսկ արցունքներս քարացել են ու չեն ուզում հավատալ իրականությանը:

- Կանգնի՛ր, չի թույլատրվում ներս մտնել, - գոռում են ետևիցս շնչահեղձ վազող ինչ-որ սպիտակ խալաթավորներ:

- Ես այստեղ նոր աշխատող եմ, ուղղակի սպիտակ խալաթս եմ տանը թողել, - բարձրաձայն պատասխանում եմ նրանց ու մտքում շարունակում ավելի բարձր գոռալ նրանց վրա. «Իսկ մորս վրաերթի ենթարկելը թույլատրվո՞ւմ էր»: Արագ մտնելով վերելակ՝ սեղմում եմ կոճակը:

Ահա, ահա այդ սենյակը՝ վերակենդանացման բաժանմունքը: Այստեղ մտնելու համար նույնիսկ աշխատակիցներից հատուկ թույլտվություն է պահանջվում: Դուռն աղմուկով բացում եմ: Մի քանի հիվանդներ իմ անսպասելի ներխուժումից վախեցած՝ տագնապած հայացքներով վրաս են նայում, իսկ պատի մոտ գտնվող մահճակալին պառկածն ամբողջովին ծածկված է սպիտակ սավանով: Մի կողմ եմ քաշում սավանը: Մա՛յրս է:

Ոչ, նա մահացած չի, նա քնած է հանգիստ ու անխռով: Կրծքավանդակին խաչված ձեռքերը դեռ մի թեթև ալրոտ են: «Մա՛մ, մամ ջան, քո փոքր դուստրն է եկել քեզ մոտ… Ե՛ս եմ, մա՛մ ջան, բա՛ց արա,

խնդրում եմ, բա՛ց արա աչքերդ...», - կամաց շշնջում եմ ականջին: Ես զգում եմ իմ ամբողջ հոգով ու մարմնով, որ նա լսում է ինձ: Նրա կոպերի արանքի նեղ ճեղքերից փորձում եմ տեսնել բիբերը: Թվում է, ուր որ է կբացի բարի աչքերն ու կժպտա ինձ՝ իր արևափայլ ժպիտով ողողելով ողջ սենյակը: Երևի շատ մեծ ճիգեր են պահանջվում կոպերը մի փոքր ավելի բացելու համար:

- Մա՛մ ջան, ամեն ինչ լավ է լինելու, դու փրկվել ես, չես մահացել, տե՛ս, ես ինչ ուրախ եմ: Հավատա, որ լա՛վ է լինելու: Տե՛ս, նույնիսկ ուրախությունից պարում եմ, նայի՛ր:

Ես ձեռքերս վեր եմ բարձրացնում ու պարում եմ, պարում խենթացած, առանց երաժշտության: Մի քանի ձեռքեր ետևից գրկում են մեջքս, մյուսները թևերիցս բռնելով ու քաշքշելով ինձ՝ մի կերպ դուրս են հրում սենյակից: Դուռը փակվելու պահին հասցնում եմ մի վերջին հայացք գցել մորս լուսապայծառ ու բարի դեմքին: Աստվա՛ծ իմ, նրա աչքերից մեկի փոսիկում արցունքի կաթիլ է հայտնվել ու բաց լուսամուտից թափանցող ճառագայթների տակ այնպես է փայլփլում: Ես

աշխարհի այդ ամենաթանկարժեք մարգարիտն ընդմիշտ կպահեմ իմ հիշողության մեջ:

- Թողե՛ք ինձ, թողե՛ք, - գոռում եմ դեպի վերելակն ինձ կոպտորեն հրող տղամարդու վրա, - մայրս կենդանի է, նա չի մահացել: Մահացած մարդիկ չեն արտասվում... ախր, մորս արցունքը դեռ թաց էր..., - ու անսպասելի փաթաթվելով բուժքրոջը և գլուխս հենելով նրա ուսին՝ հեկեկում եմ բարձրաձայն:

Ահա և սպասասրահում կանգնած իմ խեղճ ու շփոթված հարազատները: Նրանց կսկիծը ներխուժում և է՛լ ավելի է տակնուվրա անում հոգիս: Ես հասկանում եմ, որ մայրս այլևս չի ժպտա, չի շոյի գլուխս, չի հպարտանա իմ հաջողություններով ու էլ չի պարուրի իմ կյանքն իր անվերջ հոգատարությամբ:

Խելագարի նման ուզում եմ վազել տուն և փաթաթվել փոքր եղբորս, որի մոտ հարևանուհին է մնացել: Հիվանդանոցի դռների մոտ արդեն շատ բարեկամներ ու ընկերներ են հավաքվել: Նրանք կտրելով ճանապարհս սեղմում են ձեռքս՝ իրենց ցավակցական մրմունջները լցնելով առանց այն էլ ծանրացած հոգուս մեջ:

Բոլորը խղճահարված ինձ են նայում:

- Աղջի՛կս, - ասում է իմ ծեր հարևանուհին, - ոչ մի տեղ էլ մի՛ գնա: Հիմա դիակը կտանեն, միասին կգնանք: Քեզ տիրապետի՛ր, այդպես որ շարունակվի, վշտից հոգեկան խանգարում էլ կստանաս:

Մի պահ հանկարծ ցնցվում եմ զգալով, որ մորս մահով մանկությունս հենց նոր ավարտվեց: Փաստորեն, քանի մայրս կար, ես դեռ մանուկ էի, մորս համար՝ իր սիրելի երեխան: «Մա՛մ ջան, դու քեզ հետ տարար նաև իմ մանկությունը: Մնա՛ք բարով, իմ ամենահարազա՛տ էակներ՝ իմ սիրելի մայր և իմ մանկություն: Կյանքս առանց ձեզ է՛լ երբեք նույնը չի լինի», - դառնացած մտածում եմ ես:

Մեխվածի պես կանգնում եմ դռների միջև: Նայում եմ դուրս: Կյանքը շարունակվում է, իսկ մայրս էլ չկա: Մի երեխա գտել է իր կորցրած մորը հենց հիվանդանոցի բակում, իսկ Աստված գիտի, թե ինչքան մարդիկ են երկրագնդի վրա ամեն վայրկյան հավետ կորցնում իրենց մայրերին: Երեխայի մայրն ուրախությամբ ու հրճվանքով նույն խոսքերն է կրկնում բոլորին.

- Չեք հավատա, - ոտքերս իրենք իրենց բերեցին այստեղ, որտեղ փոքրիկ հրեշտակս է: Այնպիսի անբացատրելի սիրո ուժ կա մեր միջև: Գիտե՞ք, երեխայի ծնվելու ժամանակ մայր ու զավակ կապող պորտալարը բժիշկներն են կտրում, բայց նրանց հոգիները կապող լարը՝ մայրական սիրո լարը, ոչ ոք չի կարող կտրել: Այն միայն Աստծո ձեռքերում է:

«Այնպիսի անբացատրելի սիրո ուժ կա», - ականջիս մեջ դեռ հնչում են այդ կնոջ խոսքերը:

«Այո՛, այո, - մտքումս պատասխանում եմ նրան, - այդ ուժն էլ հենց ինձ այստեղ բերեց, ամենամեծ ու ամենահզոր ուժն աշխարհում՝ մայրական սիրո ուժը: Այդ ուժն էր, որ ստիպեց հոգուս լսել իմ մոր կանչը: Վստահ եմ՝ մայրս զգաց ինձ իր կողքին»:

Հանկարծ լացի ձայները մի պահ լռելուց հետո ավելի են սաստկանում՝ բարձր հեկեկոցներով լցնելով ողջ սպասասրահը: Մարդիկ ճանապարհ են բացում պատգարակը բռնած բուժանձնակազմի համար: Պատգարակի վրա տանում են ամբողջովին սավանով ծածկված իմ ամենաթանկ էակին:

«Ես շատ եմ սիրում քեզ, մա՛մ ջան, - շշնջում եմ, երբ պատգարակը բռնած սպիտակ խալաթավորներն անցնում են կողքովս, - իմ քնքույշ, իմ աննման մամա: Իմ ու քո հոգիների միջև ձգվող սիրով պարուրված մի անտեսանելի լար կապում է ինձ ոչ միայն քեզ, այլև՝ այն աշխարհին, որտեղ հայտնվել եմ քո մայրական սիրո շնորհիվ: Օրերից մի օր, Աստծո կամքով, դու տեսիլքի պես կգաս կտրելու մարմինս ու հոգիս կապող այդ լարն ու տանելու ինձ դեպի աստվածային հավերժական անդորր: Ա՛խ, իմ սիրասուն, իմ աննման, իմ լավ մա՛մա...»

Ես փակում եմ աչքերս, որ արցունքներս այլևս դուրս չհոսեն: Թող լցվեն հոգուս խորքերը, որովհետև ես պետք է ուժեղ լինեմ իմ փոքր եղբոր համար, և մարդիկ այլևս չպետք է տեսնեն իմ արցունքները: Այդպես փակ աչքերով մի քանի րոպե կանգնած եմ դռների միջև, երբ ականջիս է հասնում հեռվից ինձ կանչող մորս մի տեսակ խուլ, բայց քաղցրահունչ ձայնը.

- Սո՛նա, Սոնա ջան, այսօր եղբորդ ծնունդն է, աղջի՛կս...

Նրա ձայնը գնալով մոտենում է, և ես զգում եմ նրա ներկայությունն իմ բոլոր զգայարաններով, ասես հիմա կանգնած է իմ դիմաց:

Վախենում եմ բացել աչքերս, պարզ զգում եմ, որ մորս հոգին է եկել: «Տեսնես ինչո՞ւ, - մտածում եմ ու սիրտս սարսափից քարանում է, - հարևանուհին ճիշտ էր, վշտից երևի խելագարվում եմ»: Անելանելի վիճակիցս անհանգստացած՝ մի կերպ բացում եմ աչքերս…

Այո՛, իրո՛ք մայրս է տեսիլքի պես կանգնած իմ դիմաց, իսկ ձեռքերը դեռ մի թեթև ալրոտ են:

Միշտ կարծել եմ, որ ուրվական տեսնելիս վախից կուշաթափվեմ, բայց մայրս այնքան մեղմ է ժպտում, այնքան ջերմ, որ կուրծքս ուղղակի ցավալիորեն սեղմվում է վշտից:

Երբ նա շրջվում է ու արագ քայլերով անհետանում դռան մյուս կողմում, ես սարսափած շուրջս եմ զննում:

Հիվանդանոցում չեմ: Տանն եմ: Չեմ հավատում աչքերիս: Ես տա՞նն եմ, ուրեմն այս բոլոր դեպքերն անիրակա՛ն են: Վազում եմ խոհանոց: Մայրս տորթ է թխում: Ուզում եմ նրան պատմել այս մղձավանջային

երազի մասին, բայց ժողովրդական խոսք է՝ պետք չէ երազը պատմել որևէ մեկին, եթե չես ուզում, որ այն իրագործվի:

- Եթե չգայի քո սենյակն ու ականջիդ տակ ձայն չտայի, չէիր վեր կենա, չէ՞, - ասում է մայրս ժպտալով: - Փոքր եղբայրդ խորը քնած է, մնա տանը, մի քանի րոպեից կգամ: Տորթ եմ թխում նրա ծննդյան օրվա կապակցությամբ, իսկ կարագը վերջացավ: Վազեմ խանութ: Մինչև հագնվես, պատրաստվես՝ կգամ:

- Վա՛յ, չէ՛, չէ՛, մի գնա, ոչ մի տեղ էլ մի՛ գնա, այսօր չեմ աշխատում, ես ինքս հիմա կբերեմ:

- Բայց չէ՞ որ դու շատ գործեր ունես, - շարունակում է նա՝ գոգնոցով սրբելով ալրոտ ձեռքերը:

- Հոգ չէ, մա՛մ ջան, - արագ ավելացնում եմ ես և ուրախությունից խենթացած, նույնիսկ մեկ րոպե դեռ չանցած արդեն փողոցում եմ:

«Ես երջանիկ եմ: Ի՜նչ լավ օր է այսօր, - կրկնում եմ ինքս ինձ անդադար, - երբ աչքերդ բացում ես ու մայրդ ժպտում է քեզ, դրանից լավ բան չկա աշխարհում»:

ՏԻԿՆԻԿԸ

Քայլում եմ, իսկ հոգիս բարձրաթռիչք արծվի պես ճախրում է օդում: Վերջապես կատարվում է իմ երազանքը: Այսօր նկարչություն եմ դասավանդելու հենց այն դպրոցում, որտեղ սովորել եմ: Քայլում եմ ու ջերմանում ոչ միայն արևից, այլ նաև ինձ հաջողություն մաղթող մորս պայծառ ժպիտից, որը ողջ ճանապարհին ուղեկցում է ինձ ճիշտ նույն երջանիկ գույներով, ինչ մանկությանս տարիներին առաջին անգամ դպրոց գնալիս:

Աշնանային քամին գունազարդ տերևներ է նետում վրաս, մայթերն ու շենքերը զվարթ ողջունում են ինձ, իսկ ծառերը տերևաթափի շրշյունով մեղմիկ շշնջում են ականջիս. «Դու չես փոխվել, դու նույն սպիտակ ժապավենով աղջնակն ես»: Ես հավատում եմ նրանց: Չէ՞ որ ես էլ եմ այս վայրկյանին հենց այդ տարիքում զգում ինձ:

Բայց այս ի՞նչ լացի ձայն է: Շրջվում եմ: Այս երեխան ո՞վ է, մի՞թե վաղուց է իմ ետևից քայլում:

- Ի՞նչ է պատահել, պստի՛կ, մայրիկդ որտե՞ղ է, - հարցնում եմ մոտ հինգ տարեկան աղջնակին, որն արցունքափայլ աչուկներով ինձ է նայում: Նա ավելի ուժգին է արտասվում:

- Մայրիկիս եմ ուզում, - հեծկլտում է նա:

Ես նրան խոստանում եմ շտապ գտնել մորը:

Նրա դեմքն անմիջապես պայծառանում է, կարծես արցունքի անձրևներից դեռևս թաց դեմքի վրա արևն է շողշողում: Ակամայից ծիածանի գույներ եմ փնտրում նրա դեմքի փայլերի մեջ:

- Դուք իմ մայրիկի աշխատանքի տեղը գիտե՞ք, - հարցնում է, - նա հիմա այնտեղ է:

«Ի՜նչ կիրթ է խոսում, չնայած դեռ այսքան փոքր է, - մտածում եմ, - երևի մայրը հայոց լեզվի ուսուցչուհի է:»:

Նա իր թմփլիկ թաթիկն ինձ է մեկնում, և ես նրա փոքրիկ քայլերին հարմարվելով ուղղվում եմ դեպի մոտակա ոստիկանության բաժանմունք:

- Գիտե՛ք, ես հիմա մայրիկիս շատ եմ խղճում, - ցածրաձայն ասում է աղջնակը: Երեկ նրան շատ բարկացրեցի: Մանկապարտեզից մի տիկնիկ էի տուն բերել, և երբ նա ստիպում էր ինձ ետ տանել, չէի

համաձայնվում: Առավոտյան մայրիկս ինձ ու տիկնիկիս տարավ մանկապարտեզ ու գնաց աշխատանքի, իսկ ես աննկատ դուրս եկա փողոց:

- Ասացիր՝ տիկնիկը մանկապարտեզի՞նն էր:

- Դուք գիտե՞ք, տիկնիկս ոնց էր լաց լինում ու չէր ուզում բաժանվել ինձնից, բայց ոչ-ոք չէր տեսնում նրա արցունքները: Ես նույնիսկ Աստված պապիկին էի խնդրում, որ օգնի ինձ ու չբաժանվեմ իմ տիկնիկից:

Ես լսում եմ նրան ու մտածում. «Ի՜նչ տարօրինակ է: Այս փոքրիկը պատմում է մի դեպք, որն ինձ հետ էլ է պատահել համարյա նույն տարիքում»: Չեմ զգում, թե ինչպես է իմ մանկության այդ միակ տիկնիկը մոր փեշը քաշքշող չարաճճի երեխայի պես ինձ արդեն տարել դեպի իմ մանկութան խառնաշփոթ հիշողություններ:

...

Ես էլ այս փոքրիկի պես, սիրում էի տիկնիկներ: Մանկապարտեզում այդ օրը փափուկ, առաձգական տիկնիկներ բաժանեցին բոլոր աղջնակներին ու տուն գնալուց առաջ էլ ետ վերցրեցին: Սիրտս տակնուվրա եղավ: Ես չէի կարողանում բաժանվել իմ

տիկնիկից: Ուզում էի ամեն օր գրկել նրան, գուրգուրել ու սիրել, ինչպես մայրիկս էր ինձ սիրում:

Չեմ հիշում, թե այդ փափուկ ու խոշոր տիկնիկն ինչպես աննկատ տուն բերեցի: Իմ հնգամյա միամտությամբ թաքցրեցի այն մի այնպիսի բացահայտ երևացող տեղում, ինչպիսին մուտքի մոտ ոտքերը մաքրելու համար նախատեսված փոքրիկ կտորն էր: Կտորն անմիջապես մեջտեղի մասում ուռեց և տիկնիկիս ձևը ստացավ:

- Սա գողություն է կոչվում, - շատ չանցած լսվեց տիկնիկը ձեռքին ներս մտնող մայրիկիս բարկացած ձայնը:

Տատիկս մոտեցավ ինձ ու բացատրեց, թե հիմա ինչ ամոթալի վիճակում եմ ես ու իմ ամբողջ ընտանիքը՝ այդ խաղալիքը գաղտնի տուն բերելու պատճառով:

- Վաղը ևեթ կտանես ու կտաս մանկապարտեզի դաստիարակչուհուն և ներողություն կխնդրես, - ավելացրեց նա վերջում:

Ես կարմրեցի: Այդ պահին աշխարհում ամեն ինչ կտայի ժամանակը ետ պտտելու և ոչինչ տուն

չբերելու համար: Ամոթի զգացումը, որն ինձ սպասվում էր մանկապարտեզում, ծվատում էր իմ փոքրիկ հոգին: Ինչպե՞ս պիտի կարողանայի ինձ միշտ մոր նման սիրող ու գուրգուրող դաստիարակչուհու մեղմ ու կանացի աչքերի մեջ նայել: Ինչպե՞ս «ներեցե՛ք, չպիտի տանեի տուն» խոսքերից հետո տեսնել իմ արարքից հիասթափված նրա հայացքը, ինչպե՞ս:

- Ժողովուրդն ասում է, - շարունակեց տատիկս, - էշին նստելը մի ամոթ է, իջնելը՝ երկու, - հետո նայելով ուղիղ աչքերիս մեջ ավելացրեց, - հիմա տեսնեմ, թե ինչպե՞ս ես էշից իջնելու:

Ես, իհարկե, ոչինչ չհասկացա այդ ժողովրդական ասացվածքից: Չէ՞ որ մանկապարտեզում ոչ մի էշ էլ չկար ու ես երբեք էլ էշ նստած չկայի, այդ ինչպե՞ս պիտի իջնեի էշից:

...

Հիմա արդեն դա հասկանալով և հիշողությանս մեջ բազմաթիվ անգամներ անցնելով այդ մեկ կամ երկու ամոթների միջով, նորից ու նորից կարմրում եմ իմ կյանքի եզակի խայտառակ դեպքի համար: Միաժամանակ, չեմ կարողանում ծիծաղս զսպել

տիկնիկիս ձևն ընդունած կտորե թաքստոցը հիշելով:

Ես նայում եմ իմ առջև կանգնած փոքրիկին ու ժպտում:

- Երբ քո տարիքին էի, - ասում եմ, - շատ էի սիրում մայրիկիս հետ մտնել խաղալիքների խանութ պարզապես նայելու համար: Ուզո՞ւմ ես մտնել այս խանութը, ես չեմ շտապում:

Նա գլխի շարժումով համաձայնվում է իմ առաջարկին:

- Գիտե՞ս, պստի՛կ, իսկ Աստված պապիկն իրո՛ք կատարում է բոլոր խնդրանքները, երբ ամբողջ հոգով ես խնդրում, և հոգիդ էլ մաքուր է ու ջինջ քո աչուկների պես: Միայն թե դրանք կատարելու ժամանակը հենց ինքն է որոշում: Կարող է դա լինել մեկ օր հետո, գուցե տաս կամ էլ նույնիսկ երեսուն տարի անց:

Աղջնակը մի փոքր մտածելուց հետո հարցնում է.

- Ես մինչև հարյուրը հաշվել գիտեմ, հնարավո՞ր է նա հարյուր տարի հետո կատարի իմ խնդրանքը: Իսկ կարո՞ղ է հարյուր տարի հետո Աստված պապիկը

մոռանա, թե ինչ եմ խնդրել, չէ՞ որ պապիկները մոռացկոտ են դառնում:

- Մի՛ մտահոգվիր, ուղղակի խնդրիր այնպիսի բան, որ հարյուր տարի հետո էլ պետք լինի, - շոյելով նրա կարճ, շագանակագույն մազերն ավելացնում եմ ես՝ հիշելով իմ կյանքի ամենաառեղծվածային օրը, երբ իմ մանկական երազանքն իրականացավ ոչ թե հարյուր, այլ՝ երեսուն տարի անց:

...

Իմ ծննդյան օրն էր: Ես, ամուսինս և փոքրիկ աղջնակս մետրոյի գնացքի մեջ էինք: Նստել էինք կողք կողքի ու լուռ էինք: Դեռ մեկ կանգառ էինք անցել, երբ դռները բացվեցին ու մի կարճահասակ, թմփլիկ կին կողովը ձեռքին մտավ ներս: Զարմանքով նկատեցի, որ կողովը լիքն էր ասես նույն փափուկ ու առաձգական տիկնիկներով, որոնցից մեկը ես մանկապարտեզից տուն էի տարել:

Ներս մտնելուն պես նա հայացքն ուղիղ ինձ վրա սևեռելով՝ քայլեց իմ ուղղությամբ ու զամբյուղից մի տիկնիկ հանելով մեկնեց ինձ:

- Սա Ձեզ, սրտանց նվիրում եմ, - ժպտալով ասաց ու կանգնեց իմ դիմաց:

- Ի՞նձ, գուցե իմ փոքրիկ աղջկա՞ն եք ուզում նվիրել, - տարակուսանքով հարցրեցի նրան՝ աջ կողմում նստած դստերս մատնացույց անելով:

- Ո՛չ, ո՛չ, սա Ձեզ համար է, - ասաց ու շրջվելով քայլեց դռան կողմը՝ մյուս կանգառում իջնելու նպատակով: Կարծես ներս էր մտել միայն տիկնիկն ինձ տալու համար, ա՛յ քեզ բան:

- Այդ կինն ո՞վ էր, - զարմացած հարցրեց ամուսինս, - նա գիտե՞ր, որ քո ծննդյան օրն է:

- Չէ, որտեղի՞ց իմանար, անծանոթ կին էր: Ես էլ եմ ապշած: Էս ի՞նչ տարօրինակ օր է այսօր, և ի՛նչ զուգադիպությո՛ւն: Մանկությանս տարիների իմ անկատար երազանքն էր՝ ծննդյանս տոնի կապակցությամբ հենց այս նույն տիկնիկից նվեր ստանալ: Եվ ահա այսօր իմ ծննդյան օրն է, բայց ես արդեն երեսունհինգ տարեկան եմ, տիկնիկն իմ ինչի՞ն է պետք:

Մենք մի լավ ծիծաղեցինք այդ անսպասելի մանկական նվերի վրա: Բնականաբար, նվիրեցի աղջկաս:

...

Ես այնպես տարված եմ քայլում քաղցր հիշողություններիս արահետներով, որ փոքրիկի ձեռքն ամուր բռնած հայտնվում եմ ոչ թե մոտակա ոստիկանությունում, այլ՝ դպրոցի ներսում, այնտեղ, ուր որ ուղղորդվել էի մինչև երեխային հանդիպելը:

- Վա՛յ, այս ո՞ւր եմ քեզ բերել, - ասում եմ շփոթված, - սա իմ դպրոցն է, որտեղ սովորել եմ ու հիմա էլ աշխատելու եմ:

- Ես էլ այստեղ կսովորեմ, երբ դպրոց գնամ, - ասում է փոքրիկը՝ հետաքրքրությամբ նայելով պատերին փակցրած օրինակելի աշակերտների նկարներին:

- Ուզո՞ւմ ես ուսուցչանոցը քեզ ցույց տամ, դա իմ աշխատասենյակն է լինելու, - ոգևորվում եմ ես, - արի բարձրանանք, արի, այն երկրորդ հարկում է:

Դպրոցում քար լռություն է, միջանցքներն ազատ են: Շուտով զանգը կհնչի ու երեխաները մեղուների պես բզզոցով դուրս կթռչեն իրենց «փեթակե» դասասենյակներից:

Անվստահորեն բացում եմ ուսուցչանոցի դուռը: Հիշում եմ, իմ սովորելու տարիներին այս դուռը

բացում էինք, երբ ինչ-որ վատ արարքի համար մեզ ուսուցչանոց էին կանչում:

Նույն լուսավոր սենյակն է: Ուսուցիչներից ոմանք զբաղված են ինչ-որ թերթիկներ կարդալով, մյուսները համակարգիչների մոտ են:

Դուռը բացվելուն պես փոքրիկն անսպասելի կերպով թողնում է ձեռքս և հրճվանքի բացականչություններով նետվում հայոց լեզվի ուսուցչուհու գիրկը.

- Մա՛մա, մամ ջան, ես ոչ մի տիկնիկ էլ չեմ ուզում, ես միայն քեզ եմ ուզում, ես ուզում եմ, որ դու միշտ իմ կողքին լինես:

«Ճիշտ էի գուշակել, - ինքնագոհ մտածում եմ, - նրա մայրը հայոց լեզվի ուսուցչուհի է»:

Մոր երջանիկ ժպիտն արևի հուրհրացող ճառագայթների նման տարածվում է ամբողջ սենյակով ու խինդով վարակում բոլորին: Ուսուցիչներն ընդհատելով իրենց աշխատանքը՝ հիացմունքով նայում են իրենց երջանիկ գործընկերուհուն:

- Դե իհարկե, արևս, - ասում է մայրը համբուրելով նրա կլորիկ այտերը, - ես էլ եմ ուզում միշտ քո կողքին լինել: Դու աշխարհի ամենագեղեցիկ տիկնիկն ես:

Հարմար պահ է: Ձեռքիս մեծ պայուսակը բացելով հանում եմ քիչ առաջ խանութից աննկատ գնված տիկնիկը և մեկնելով աղջնակին ուրախ ձայնով բացականչում եմ.

- Անակնկա՛լ, ես էլ քեզ նման գեղեցիկ տիկնիկին այս տիկնիկն եմ նվիրում:

Ուսուցչանոցի ապակիները, որոնք սովոր են զրնգալ միայն դպրոցական զանգի ղողանջից, հիմա արդեն զրնգում են փոքրիկ աղջնակի երջանիկ ճռվողյունից.

- Իմ տիկնի՛կը, մա՛մ, նայի՛ր, սա ի՛մ տիկնիկն է: Ես աշխարհի ամենասիրուն տիկնիկն ունե՛մ:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՍԵՐ

(բալլադ)

Քայլում էր սիրավառ պատանին,
Գնչուհին էր կանգնած իր ճամփին.
«Կաց մի պահ քեզ ասեմ, ա՛յ ջահել,
Ապագադ դեռ ինչեր է պահել:

Մի՛ փնտրիր քո սերը, հե՛գ տղա,
Մի՛ սիրիր դու նրան, մի՛ անձկա,
Մոռացի՛ր, թող հոգիդ չդողա,
Հրեղեն ձեր այդ սերն Է՛լ չկա:

Երազ էր, որ եկավ ու անցավ,
Թախծոտեց նուրբ հոգիդ, տվեց ցավ,
Եվ թողեց սևաչյան այդ հպարտ
Քո սիրո պատմությունն անավարտ:

Արև է նա սիրում պարզապես,
Խենթ քամուն սիրատենչ փաթաթվում,

Ծովից վեր սլացող ճայի պես
Իր հոգով դեպ ամպերն է թևում:

Քո սիրո պես անկեղծ, հարազատ,
Այլ սերեր է մերժել նա բազում,
Իր հոգին թռչնի պես միշտ ազատ,
Միայնակ է ճախրել երազում»:

Ու պարեց գնչուհին մոգական,
Հավատաց խոսքերին խենթ տղան,
Իսկ աղջիկն իր սիրով հուրհրան
Ողջ կյանքում զուր սպասեց լոկ նրան:

ՆՈՐ ՕՐՆ Է ԳԱԼԻՍ

Անձկոտ, կարծես թե մի վերջին անգամ
Արեգն աշխարհին իր սերն է տալիս,
Իսկ մայրամուտին տխուր է այնքան,
Թախծոտ ամպերն են աձրևոտ լալիս:

Չէ՞ որ հողմը խենթ, հողմը խելահեղ
Խառնելով նորից անցյալ և ներկա՝
Հասնում է բարձր ժայռին փառահեղ,
Ու քարեր նետում նոր օրվա վրա:

Ամեն քարի հետ՝ մի նոր պատերազմ,
Նոր արհավիրքներ, ցավեր ու փորձանք,
Մի անսանձ քամի՝ անձև ու անկազմ
Եվ այսքա՛ն աղետ, այսքա՛ն պատուհաս:

Բայց չէ՞ որ արփին թե որ պայքարի
Ու քամուն սանձի իր իսկ լեռներում,

Խաղաղությունը կկերտվի դարի,
Իսկ չարագործին չի՛ լինի ներում:

Եվ ժպտում է ծեր արփին կենարար,
Արյան բոսորով ներկում ամպ ու քար,
Աշխարհն է տեսնում՝ պայքարում կենաց
Քամին չնչին է արևի դիմաց:

Արդ անձկոտ նորից, բայց և հաղթական
Օրվա արևն է հրաժեշտ տալիս,
Քանզի վստահ է ու հաստատակամ՝
Լույսով ողողված նոր օրն է գալիս:

ԴԵՊԻ ՀԱՂԹԱՆԱԿ

Սպանե՛ք ինձ, սպանեք
Ու սիրտս հանե՛ք,
Կախե՛ք այն ծառից մոտակա:
Բայց եղե՛ք դուք զգույշ,
Այն նուրբ է, քնքույշ,

Կջարդվի, Է՛լ չի դիմանա:
Թե լույս տա մի քիչ
Ու հույս վարակիչ,
Այդ լույսից դուք չեք կուրանա:
Լույսին թափանցիկ
Նայեք հպանցիկ,
Որ տեսնեք՝ ով է սատանա:
Մաքրեք մեր հողը,
Որ մեր տան գողը
Այդ լույսից փախչի, հեռանա:
Թե լույսը մարի՝
Խավարը պատի,
Հիշե՛ք, ինչ տեսաք լույսի տակ:
Մնում է գործել,
Սրտերը թրծել,
Ու առա՛ջ, դեպի հաղթանակ:

ՍԻՐՈ ՀՈՒՇԵՐ

Շուրջդ անդորր է, չունես ոչ մի դարդ,
Ձերմանում ես լոկ մայր հողի ծոցում,
Դաշտե վերմակ ես ընտրել ծաղկազարդ,
Էլ չե՛ս այրվում դու մեր սիրո բոցում:

Ու մարդիկ ծանր շիրմաքար դրել՝
Ամուր փակել են դուրս գալուդ ճամփան,
Որ հողի տակից դադարես սիրել,
Չդառնաս անմահ սիրուս պահապան:

Մինչդեռ ժպիտդ, որպես ուրվական,
Հետապնդում ինձ ամեն մի վայրկյան,
Խամրող երգ դառնում՝ ձայնի ելևէջ
Ու լույս է մուրում լուսնի լույսի մեջ:

Քո լռությունը սիրտս է մորմոքում,
Հուշերն են միայն շրջում ամենուր,
Եվ այդ հուշերիս լուսավոր խորքում
Քո սերն է ապրում՝ բյուրեղյա, մաքուր:

Ես քեզ զգում եմ իմ ամեն շնչով,
Ծիծաղի միջով, քո մահվան միջով,
Լսո՞ւմ ես, ե՛ս չեմ, սերս է հեկեկում՝
Փոթորկից հետո լռության գրկում:

Ու շշնջալով սիրո հևքի մեջ,
Մեղմ ու սիրատենչ կրկնում է անվերջ.
- Սերը չի մեռնում, կյանքն է լոկ դաժան,
Սիրող սրտերն երբ մնում են բաժան:

ԽԱՌՆԱՇՓՈԹ

Ախ, ինչքա՜ն խառն է, մեր կյանքն ու շփոթ,
Էլ չեմ դիմանում,
Կարծես Է՛լ ոչ ոք չունենա ամոթ,
Թե՞ ինձ է թվում:

Մի ճիշտ մյուսի դեմ կռիվ է տալիս,
Բայց սուտն է հաղթում,

Իր սուրը թաքցրած թշնամին գալիս՝
Լավ օր է մաղթում:

Մի երկիր այլոց արյունն է թափում՝
Ոչ ոք չի պատժում:
Դրախտի խնձորն Եվան է պոկում՝
Բոլորս ենք տուժում:

Պտղի մեջ որդ կա՝ մարդը չի ուտում
Ու դեն է նետում,
Իսկ մահից հետո այդ մարդն է սնում
Որդերին բազում:

Ինչ-որ մի երկրում կռվում են, զոհվում.
«Դեպի հաղթությո՛ւն»,
Մինչդեռ կռիվ է սոսկ բեմադրվում՝
Լոկ ողբերգություն:

Մարդն աշխարհ գալիս կամ էլ գնալիս
Ի՞նքն է որոշում,
Նրա կարծիքը, նույնպես, սիրելի՛ս,
Ոչ ոք չի հարցնում:

Հոգիները հեգ, վշտից պղտորվում,
Ու Է՛լ չեն բուժվում,
Նույնիսկ Աստվածն է ցավից մոլորվում՝
Լավ է՝ չի գժվում:

Եվ ինչո՞ւ մենք էլ՝ Աստծուն պաշտելով,
Պահում ենք պասեր,
Իսկ մեր պատմության խորքը նայելով՝
Չենք քաղում դասեր:

ՄՈՒՐԱՑԻԿԸ

Մուրացիկն եկել
Ու մեզ է հասել,
Դռներն է թակում
Ու կյանքեր մուրում:

Ուժով կխլի,
Թե որ դուք չտաք

Ու կխարխլի
Օջախը ձեր տաք:

Կռիվ են կոչել
Ամենքը նրան,
Հեռվից է քոչել՝
Ծարավ է արյան:

Բացե՛ք դռները,
Երբ որ մոտենա,
Սիրուց ձեր հուժկու
Նա կանհետանա:

Դուք սիրեք իրար
Ու ձեր հայրենին,
Թող սիրուց վարար
Փախչի վայրենին:

Չէ՞ որ, թե սեր կա,
Այնտեղ վախ չկա,

Որտեղ վախ չկա՝
Հաղթանակ մի՛շտ կա:

Իսկ թե ձեր դռնից
Նա ներս չմտնի,
Գուցե երթիկից
Իր ճամփան գտնի:

Արձակ պահեք ձեր
Շներին գազան,
Էդ կռիվն ի՞նչ է,
Որ հախից չգան:

ԿԱՐՈՏՆԵՐ

Ա՛խ, սիրելինե՛ր իմ ծառարմատի,
Իմ բարի՛ պապիկ, իմ քնքո՛ւյշ տատիկ,
Իմ այս աշխարհից ո՞ւր եք հեռացել,
Ամեն ինչ անցել, հուշն է մնացել:

Ու հիմա հերթով հողի տակ կորչում,
Մտերիմներս են շարունակ հանգչում,
Ա՛խ, ծառ եմ դարձել, չորացել ե՛ս էլ,
Թվում է մի դար նրանց չեմ տեսել:

Կարոտով մի թաց, կարոտով ցավոտ,
Արթնանում եմ ես ամեն առավոտ,
Նրանք կանչում են, կանչում իրենց մոտ,
Երբ պայծառ է օրն ու ի՞նչ արևոտ:

Բայց չէ՞ որ պիտ ես ծաղկի մեջ մտնեմ,
Քաղցր, նեկտարե խոսքեր դեռ գտնեմ,
Դառնամ ծառի տակ խոխոջող գետակ,
Հասնեմ ամպերին, ինչպես մի հրեշտակ:

Ու ապրե՛մ, ապրեմ, այնքան ճիշտ ապրեմ,
Մոմի պես հալվեմ, բայց և լույս բերեմ,
Հուշերիս գրկում թեկուզև հուզվեմ,
Կարոտն իմ սրտում անվերջ երազեմ:

ՉԳՈՆ ԼԻՆԵՆՔ

Դարերից եկող ղողանջը զանգի
Վանքերից ու մեր վերքերից բխող,
Հեծեծանքները մի ամբողջ ազգի
Ո՞վ կլռեցնի և ո՞վ է կարող:

Ինչքան էլ Նեռը սուտ ահազանգի,
Փշրել ցանկանա պատերը վանքի,
Ստիպի հոգու դեմ չարիքներ գործել,
Աստծո տաճարը չի կարող պղծել:

Սրերն իրար դեմ իզուր չհանե՛նք,
«Կայսրինը կայսրին, Աստծունը՝ Աստծուն»,-
Սա է պետք, մարդի՛կ, որ տարբաժանենք,
Ինչպես ուսանեց Քրիստոսն սիրասուն:

Ուզում է Նեռը նորից մեզ զարկե՞լ
Ու իմ սերունդը սուրբ խաչից զրկե՞լ,

ՉԷ՞ որ երեք հայ մի տեղ հավաքվենք՝
Մի նոր վանքի սկիզբ անշուշտ կդնենք:

Խաչի ճյուղերից բողբոջներ տալով,
Թեկուզ մեր բնից հեռու գնալով՝
Թշնամու առաջ չենք իջնի ծնկի,
Կծնկենք միայն վանքում Էջմիածնի:

ԺՊԻՏԸ

Դու ժպտում ես ինձ ամեն առավոտ
Ու նորից կորում հուշերիս գրկում,
Ժպտում ես պայծառ, այնպես արևոտ,
Մայ՛ր իմ սիրասուն, բարի, իմաստուն:

Ժպիտից լուսե, այրվող, բոցեղեն
Քամին կայծեր է շաղ տալիս վրաս,
Այրում քո սիրով՝ պայծառ, հրեղեն
Ու կյանքս ասես թվում է երազ:

Ես ո՞նց գովերգեմ, թե ի՞նչ բարիք է
Լինել մոր կողքին, լինել միշտ սիրված,
Բանաստեղծները կասեն. «հերիք է,
Ի՞նչ ճոխ բառեր են մորդ նվիրված»:

«Դե ստեղծեք, - կասեմ, - գեթ մի բառ հատուկ,
Մոր ժպիտի պես մեղմ ու անաչառ,
Քանզի նրա մեջ աշխարհն է մանուկ՝
Օծված մոր սիրով հավերժ ու պայծառ»:

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐՔԵՐ

1. «Խառնաշփոթ գույներ», 2023թ., Երևան
(առակներ, բանաստեղծություններ, հեքիաթներ)

2. «Առաջին օրը գյուղում», 2023թ., Երևան
(երգիծական վիպակ)

3. «Եռագույն խոհեր», 2023թ., Երևան
(բանաստեղծություններ, պատմվածք)

4. «Սրտի աչքը», 2024թ., Երևան
(բանաստեղծություններ, պատմվածք)

5. Ձվարճալի այբուբեն», 2024թ., Երևան
(երգիծական չափածո ակրոստիքոս)

6. «Հոգու խճանկար», 2025թ. Երևան
(պատմվածքներ, բանաստեղծություններ)

7. «Մոր ժպիտը», 2025թ. Երևան
(պատմվածքներ, բանաստեղծություններ)

(Email: rosavard7@gmail.com)

ՌՈՒԶԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՈՐ ԺՊԻՏԸ

Խմբագիր՝ ՍՈՒՍԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ